ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 15-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի նախագահի 03.06.2016թ. թիվ 173-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված «Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի 3.1 կետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի մարզային համակարգողների թեկնածուներին գրանցելու, քվեարկությունները կազմակերպելու և քվեարկությունների (ընտրությունների) արդյունքներն ամփոփելու նպատակով կազմավորել մարզային հաշվիչ հանձնաժողով՝ երկու տարի ժամկետով:***

2. ***Մարզային հաշվիչ հանձնաժողովի անդամներ նշանակել փաստաբաններ՝***

- ***Ապետնակ Պողոսյանին (արտոնագիր № 961),***
- ***Քրիստինե Նշանյանին (արտոնագիր № 1239),***
- ***Տաթևիկ Շալջյանին (արտոնագիր № 1736):***

3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել հաշվիչ հանձնաժողովի նորանշանակ անդամներին:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

30 օգոստոսի 2018թ.
թիվ 333-Ա
ք. Երևան